«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ «Ես և շրջակա աշխարհը»

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ «Ալավերդու թիվ 12 հիմն. դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայում 4
3. <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասընթացի ուսուցման մեթոդներն ու եղանակները աշակերտների վարքի ձևավորման հարցում 7
4. Դաստիարակությունը որպես անձի և պատասխանատու վարքի ձևավորմանն ուղղված նպատակասլաց գործընթաց 10
5. Մարդու մեջ դրականի վրա հենվելը 13
6. «Ես և շրջակա աշխարհը» առարկայից դաս-պլանի նմուշ-օրինակ: 17
7. Եզրակացություն 21
8. Օգտագործված գրականություն 22

Ներածություն

Բնության և հասարակական կյանքի համադրված իմացությունը հնարավոր է դարձնում ըմբռնել կենդանի և անկենդան բնության կապերը, երեխաների մեջ դաստիարակել բնության նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք: Ծանոթացնել բնության վրա մարդու ունեցած ներգործությանը և նպաստել բնության հարստությունների մասին նրանց գիտելիքների ընդլայմանը՝ ելնելով էկոլոգիական պահանջներից:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասընթացի ուսուցման նպատակն է ընդլայնել երեխաների տարրական գիտելիքները բնության առարկաների և երևույթների մասին մատչելի օրինակներով ծանոթացնել գոյություն ունեցող փոխադարձ կապերի, մարդկանց աշխատանքին՝ կապելով բնության պահպանման և բնության բարիքների օգտագործման հետ: Գիտելիքների բազմազանությունը պահանջում է ուսուցման նույնպիսի մեթոդներ, ձևեր ու եղանակներ. զարգացնելու երեխաների գործնական ունակությունները և դրանով նպաստել նրանց աշխարհայացքի ձևավորմանը, անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանը՝ դաստիարկելով սեր հայրենքի և հայրենի բնաշխարհի նկատմամբ:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասվանդումը տարբեր մեթոդներով խթանում է սովորողների ինքնուրույն հետազոտական, տրամաբանական, քննադատական մտածողության, վերլուծական, ինքնագնահատման կարողություններիի զարգացմանը և ճանաչողական հետաքրքրությունների արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը:

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորմանն ուղղված մեթոդները <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայում

Այսօր մեր երկիրն ընտրել է ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հիմնված քաղաքացիական հասարակության ստեղծման ուղին, հասարակություն, որը կձևավորվի ազգային արժեքների ու համամարդկային զարգացումների խելամիտ ներդաշնակցմամբ: Ժամանակակից դպրոցը այսօր առավել քան երբևէ, պետք է միտված լինի սովորողների ներուժի բացահայտման, սովորողների անհատականության զարգացմանն ու նրանց համար սեփական յուրօրինակությունն արտահայտելու հնարավորության ստեղծմանը: Ժամանակակից ուսուցչի հիմնական նպատակը պետք է լինի խթանել երեխայի բնականոն զարգացումը և օգնել նրան գտնելու սեփական առաքելությունն այս կյանքում: Դպրոցական տարիքը երեխայի կյանքի բուռն զարգացման ժամանակաշրջանն է: Աշակերտը իր կարողությունների չափով ընկալում է շրջապատող աշխարհն ու որոշում իր տեղն աշխարհում: Իր հարցասիրությունների շնորհիվ և մեծահասակների օգնությամբ նա կարողանում է ճանաչել աշխարհն ամբողջ բազմազանությամբ: Տարրական կրթությունը դպրոցի առաջին աստիճանն է: Այն նախանշում է հաջորդ աստիճանները: Հենց այստեղ են դրվում կրթության բովանդակության հաջող յուրացման, սովորողի անձի հետագա ձևավորման հիմքերը: <<Տարրական կրթության հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքայինն նախնական հմտությունների ձևավորումն է>>: Աշակերտը ուսումնասիրում է շրջապատը, ամեն մի նոր

տեղեկատվություն «փորձարկում» իր վրա և դարձնում գիտելիքի պաշար: Այսպես թե այնպես կյանքի ընթացքում մեր սովորածի զգալի մասը ինքնազարգացման արդյունք է: Եվ յուրաքանչյուրս էլ կարող է վկայել, որ ամենից լավ տպավորվում են այն գիտելիքները, որոնց համար ջանք ենք գործադրել: Ուստի հաջողության հասնելու համար պետք է խրախուսել, իմ կարծիքով, երեխաների ինքնուրույն սովորելու հանդեպ պատասխանատվություն ստանձնելու կարողությունը: Շրջակա միջավայրի ծանոթացումը զուգակցվում է լեզվական հմտությունների ձևավորման հետ: Դրան նպաստում է դպրոցում կազմակերպվող «Ես և շրջակա» աշխարհը առարկան:

Տարրական դպրոցում գործող ծրագրերից միայն «Մայրենի» առարկան է մասնակիորեն
լուծում սովորողների բնության և հասարակության վերաբերյալ նախագիտելիքների ձևավորման խնդիրը:

«Ես և շրջակա» աշխարհը առարկան լրացնում է վերոնշյալ բացթողումները: Տարրական դպրոցում բնության տարրերի և երևույթների ուսումնասիրությունը սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով զարգացնելու ճանաչողության մեթոդները: 7–10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար: Դա երեխայի կյանքում ինքնագիտակցության աճի ժամանակաշրջանն է: Շատ կարևոր է, որ հենց այս տարիքից սկսած աշակերտները կարողանան յուրաքանչյուրի նկատմամբ դրսևորել արդարացի վերաբերմունք, սեփական արժանապատվության զգացումը գնահատելու, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ձևավորելու կարողություններ զարգացնել:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.

- Աշակերտներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին, մարդկային հարաբերություններին
- Սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, սովորողների մոտ ձևավորել իրենց և շրջակա աշխարհը ճանաչելու հմտություններ:

• Նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը:

• Օգնել դառնալ աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն:

• Նպաստել աշակերտների ինքնադրսևորման և ինքնաարտահայտման հմտությունների ձևավորմանը:

Արդի հասարակությանը անհրաժեշտ են այնպիսի մարդիկ ովքեր.

• վստահ են իրենց ուժերին,

• ակտիվորեն գործում են կյանքի մշտապես փոփոխվող և անկանխատեսելի իրավիճակում,

• կարողանում են պատասխանատվություն կրել սեփական արարքների համար չխախտելով ուրիշների իրավունքներն ու ազատությունները:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վերը նշված որակներով անձի ձևավորմանը: Յուրաքանչյուր սովորող պետք է օժտված լինի բարձր ինքնագիտակցությամբ և առավելագույնս ինքնիրացված անձնավորություն:

Այս համարժեքում կրտսեր դպրոցականների անհատականության զարգացումը մանկավարժական կարևոր խնդիր է: Մարդն անհատականություն է այն ժամանակ, երբ գիտակցում է սեփական եզակիությունը, անկրկնելիությունը, ինքն է կերտում իր ապագան և կարողանում է դրսևորել իր բոլոր հնարավորությունները: Անձնային առանձնահատկությունները աշակերտի սոցիալական որակներն են: Անձնային առանձնահատկությունների զարգացման հիմնական ճանապարհը կրտսեր դպրոցականի կյանքի ընթացքն է: «Ես և շրջակա աշխարհը» առարկան հնարավորություն է տալիս կրտսեր դպրոցականներին ճիշտ դաստիրակվելու, անձի և պատասխանատու վարքագծի ճիշտ ձևավորմանը: << Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները բացի ակադեմիական նպատակներից ներառում են հետևյալ հմտությունների, վերաբերմունքների և արժեքային համակարգի ձևավորումը արդյունավետ հաղորդակցվելու,

համագործակցելու, որոշումներ կայացնելու հմտություններ, հանդուրժողականությոն, պատասխանատու վարքագիծ, քաղաքացիական ակտիվ դիքորոշում և այլն:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասընթացի ուսուցման մեթոդներն ու եղանակները աշակերտների վարքի ձևավորման հարցում

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկան ընդգրկում է բազմազան տարրական գիտելիքներ բնության և հասարակական կյանքի վերաբերյալ: Գիտելիքների բազմազանությունը պահանջում է ուսուցման բազմաթիվ ձևեր ու եղանակներ: Դրանք պայմանավորված են նաև աշակերտների ընկալման կարողությամբ: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսուցումը կազմակերպվում է բացատրական ընթերցանության, զրույցի, պատմելու, փորձեր դնելու, պրոբլեմային ուսուցման դիտումների գործնական աշխատանքների միջոցով և այլ մեթոդներով և ձևերով: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան դասավանդելիս կիրառվող տարբեր մեթոդներից յուրաքանչյուրն էլ իր տեղն ունի իր առավելություններն ու թերությունները: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ առավել հաճախ կիրառվող հնարքներից է խմբերով աշխատանքը: <<Աշխատանք խմբերով>> սա հնարավորություն է տալիս, որ բոլորն էլ կարծիք հայտնեն, մտքեր փոխանակեն, հիմնեն իրենց ընդհանուրը, կարևորագույնը: Համագործակցություն պահանջող միջոցառումները աշակերտներին խմբային աշխատանքներ կատարելու հնարավորություն են տալիս: Փոքր խմբերով աշխատելը թույլ է տալիս ճանաչել միմյանց, որպես անհատներ և պատասխանատվություն զգալ խմբի անդամների և խմբի հանդեպ:

<<Մտքերի տարափ>> մեթոդը նպաստում է մտածողության զարգացմանը, նոր գաղափարների ծննդին: Սովորաբար առաջացնում է աշխուժություն և լիցքավորում է աշակերտներին՝ ներգրավվելով նույնիսկ երկչոտներին: <<Ես և շրջակա աշխարհը>> դասագրքում ներկայացված պատմվածքները ներկայացնում են իրավիճակ, որը ընթերցելուց հետո կատարում են իրավիճակի վերլուծություն, եզրահանգումներ և

հետևություններ: Նույնիսկ <<Խաղային մեթոդ>>-ն է կիրառվում, որտեղ իրագործվում է նյութը և դերախաղը: Մասնակիցներին հանձնարարելով դերեր. նրանք իրադրությունը ներկայացնեն համապատասխան գործող անձանց տեսանկյունից: Աշակերտները սովորում են զուգահեռներ անցակացնելով իրենց խաղացածի և կյանքից իրենց ունեցած փորձի միջև: Վերլուծում են իրավիճակը, կարծիքներ են հայտնում և առաջարկում լուծումներ:

<<Պատմելու>> մեթոդով երեխաները, ոչ միայն գիտելիքներ են ստանում, այլև սովորում և վարժվում են պատմել, զարգանում է նրանց բանավոր խոսքը և արտահայտվելու կարողությունը: Պատմելու միջոցով զարգանում է բանավոր խոսքի կուլտուրան, ազատ ու անկաշկանդ, պատկերավոր արտահայտվելու հմտությունը:

<<Պրոբլեմային ուսուցման>> մեթոդը նպաստում է աշակերտներին մտածել և ինքնուրույնաբար լուծել. օրինակ՝ <<Ինչու բարձր լեռներում ցուրտ է լինում>>, <<Ինչու ամպամած օրերին ցող չի առաջանում>>:

<<Հետազոտական>> մեթոդն առավել ինքնուրույն են դառնում, փորձ են կատարում, կամ հանձնարարվում է եղանակի փոփոխման ինքնուրույն դիտումներ կատարել և տվյալներ գրել: Փորձերի կատարումը նպաստում է ոչ միայն նոր գիտելիքի ձեռք բերման, այլև նպաստում է աշխարհաբմբոնման ձևավորմանը, տրամաբանական մտածողության հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

Էկոլոգիական գիտելիքների ձևավորումը կապված է սովորողների մեջ հուզական-կամային հատկանիշներ դաստիարակելու և զարգացնելու հետ: Բնության նկատմամբ սիրո դաստիարակությունը միավորված է հայրենիքի դաստիարակության հետ: Ուստի, էկոլոգիական դաստիարակությունը սերտորեն կապված է գաղափարաքաղաքական, հայրենասիրական, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակության հետ:

Բարությունը, կարեկցանքը, խիղճը, բնության գեղեցկություններով հիանալու, այն պահպանելու, ավերումը կանխելու կարողությունը ձևավորվում է <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի թեմաները ուսումնասիրելիս:

Բնության կոնկրետ երևույթների վերբերյալ գիտելիքների /բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, երկրի աշխարհագրական օբյեկտները/ հաղորդման

պրոցեսում զարգանում է սովորողների դիտողականությունը: Բացի հետազոտական և գործնական աշխատանքներից զրույցը նույնպես կարևոր է: Այսպես օրինակ. այս մեթոդի կիրառմամբ երեխաներն ամբողջ դասին գտնվում են ակտիվ վիճակում: Նրանք մտածում են, վերլուծում, հանգում են ինքնուրույն եզրակացությունների:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդումը տարբեր մեթոդներով, խաղերի կիրառմամբ հնարավորություն է տալիս աշակերտների մեջ սերմանել կամք, նպատակասլացությունմ, պատրաստակամություն: Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորումն ապահովվելու համար պետք է ճանաչել երեխային: Երեխայի անձի և վարքի ճիշտ ձևավորման վրա մեծ դրական ազդեցություն է ունենում կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը: Յուրաքանչյուր կրտսեր դպրոցական սրտի թրթիռով սպասում է այն խրախուսանքին, որին կարժանանան ուսուցչի կողմից: Աշակերտներին միայն բարեխիղճ ջանքի և իրական արդյունքների համար գովեք: Չհիմնավորված գովեստը կարող է կեղծ ինքնավստահություն առաջացնել և երեխաների մեջ իրենց կարողությունների մասին թյուր կարծիք ստեղծել: Երեխայի արժեքային համակարգը ձևավորվում է դպրոց մտնելու շեմին: Ուսուցիչը պետք է ճիշտ մեթոդներ կիրառելով զարգացնի, խթանի նրա զարգացումը: Շատ կարևոր է, որ կրտսեր դպրոցականը կարողանա ինքնուրույն կազմակերպել իր կյանքը, իմանա իր հետաքրքրություններն ու նախասիրությունները, դրանց հասնելու մեթոդները: Առավել դյուրին է դառնում աշակերտի ընկալումը, եթե այն մատուցվում է խաղերի հետաքրքիր պատմությունների միջոցով /օրինակ՝ <<Ծովեր, օվկիանոսներ>> թեման անցնելիս օգտագործել <<Հող, ջուր, օդ>>, խաղը, <<Ծով անտառ, անապատ>> խաղը/: Դնել աշակերտներին այնպիսի իրավիճակների մեջ, որ աշակերտը կարողանա ելք գտնել և ճիշտ որոշում կայացնել իրավիճակից դուրս գալու համար: Այս պարագայում օգնում է ուսուցչի հմտությունը և վարպետությունը:

Դաստիարակությունը որպես անձի և պատասխանատու վարքի ձևավորմանն ուղղված նպատակասլաց գործընթաց

Դպրոցական կրթության պայմաններում դաստիրակությունը հանդես է գալիս որպես աշակերտների անձի գիտակցության և վարքի ձևավորման հստակ կերպով կազմակերպված ու նպատակաուղղված մանկավարժական գործընթաց։ Դաստիրակության մեթոդիկան բացահայտում է աշակերտների դաստիրակության նպատակներն ու բովանդակությունը, դաստիրակության ձևերն ու մեթոդները, նրա արդյունավետ իրագործումն ապահովվող պայմանները։ Դաստիարակության ու անձի զարգացման միասնությունն ու փոխկապակցությունը դաստիրակության գործընթացի օրինաչափությունն են։ Օրինաչափ կապ գոյություն ունի դաստիարակչական ներգործության, փոխազդեցության և դաստիրակվողների ակտիվ գործունեության միջև։ Մանկավարժական գործընթացի կազմակերպումը կառուցվում է նրա շարժիչ ուժերի հաշվառումով բացասական երևույթների ու փաստերի հաղթահարման և դրական միտումների հաստատման միջոցով։ Դաստիարակչական գործընթացի վրա ոչ նպաստավոր է արտահայտվում դպրոցի և ընտանիքի դաստիարակչական ներգործությունների անհամապատասխանությունը, ընտանիքի կողմից դպրոցի որոշ պահանջներին հակակայելը։ Իմ կարծիքով «Ես և շրջակա աշխարհը» առարկան հնարավորություն է տափս կրտսեր դպրոցականների ճիշտ ձևավորմանը, վարքի և պատասխանատվության բարձրացմանը։ Կրտսեր դպրոցականը «Ես և շրջակա աշխարհը» առարկան ուսումնասիրելուց հասկանում է ինչ ասել է «արարք», կարողանում է տարբերել հետևանքների դրականը և բացասականը, ունենում է պատասխանատու վարք։ Բոլոր այն արտաքին գործոնները, որոնք պայմանավորում են անձի ձևավորումն ու զարգացումը, միաժամանակ նրա սոցիալական ակտիվությունը որոշող գործոններն են։ Անձի ակտիվությունը սոցիալական է ոչ միայն նրա համար, որ ծնվում է այն հասարակական միջավայրի կողմից, որի մեջ ընթանում է նրա կեցությունը։ Որտեղ են ընկած այնպիսի տարածված երևույթների ակունքները

ինչպիսիք են դպրոցականների ոչ նախաձեռնողականությունը, պասսիվությունը, անտարբերությունը, անկարեկցությունը: Այս հարցերի պատասխանները միանշանակ չենք կարող գտնել. կարելի է որոշակիորեն պնդել, որ այդ կարգի երևույթները հետևանք են մանկական ակտիվության, անտեսման կամ ուղղակի մանկավարժական ներգործության գերագնահատման: Խրախուսելով և զարգացնելով դպրոցականների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը անհրաժեշտ է մշտապես շտկել նրանց հետ հարաբերությունների ոճը նրանց աճող ինքնուրույնության համապատասխան: Արդարացի եմ համարում այն փաստը, որ հասարակության համար արժանի անձ ձևավորելը հումանիստական մանկավարժության գագաթն է, իսկ աշակերտների նկատմամբ հարգանքը դպրոցում տիրող դաստիարկչական փոխհարաբերությունների հիմքերի հիմքն է: Ուսուցչի հարգանքը աշակերտների նկատմամբ հարգանք է դեռահասի, պատանու, աղջկա նկատմամբ: Անձի խնդիրը կարող է լուծվել, եթե ամեն մի մարդու մեջ տեսնել անձնավորությունը: Ինչպես ասել է մանկավարժ Մակարենկոն.
«Երեխաները կենդանի կյանքեր են ու գեղեցիկ կյանքեր և դրա համար հարկավոր է նրանց վերաբերվել ինչպես ընկերների ու քաղաքացիների, հարկավոր է տեսնել ու հարգել նրանց իրավունքներն ու պարտականությունները ուրախության ու պատասխանատվության իրավունքը»: Նա նաև ասել է. «Չի կարելի կոփել մարդուն, եթե նրա առաջ չդրվեն դժվար խնդիրներ, որոնք որոշ դեպքերում կարող են ձախողվել: Եթե դուք վախենաք, որ այն ձախողվելու է, չդնեք դժվար խնդիրներ, նշանակում է այն անպայման ձախողվելու է»:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսումնասիրությունը թույլ է տալիս դաստիարակել և ձևավորել հասարակության համար ինքնուրույն, սեփական սխալները գիտակցող անձ:

Հասկացնել, որ սխալվելը մարդկային է: Երեխաները պետք է իմանան, որ սխալները նաև սովորելու հնարավորություն են տալիս: Չի սխալվում նա, ով ոչինչ չի անում, կարևորը սխալներից դասեր քաղելն է:

<<Ես և շրջակա աշխարհը>> առարկան թույլ է տալիս ինքնուրույն եզրահանգումներ անել: Առարկան հնարավորություն է տալիս խուսափել երեխաների ուժերի ու հնարավորությունների իդեալականացումից, տարերայնությունից, ինքնահոսից: Այդ

նպատակով ուսումնաաշխատանքային ու հասարակական բոլոր ոլորտներում նրանք ըստ հնարավորին պետք է դրվեն ընտրություն կատարելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու: Դրանց կատարմանը ակտիվորեն մասնակցելու անհրաժեշտության առաջ հատկանշական է «Իմ իրավունքներն ու պարտականությունները», «Ինչպես եմ որոշումներ կայացնում», «Նախաձեռնություններ և նպատակներ» թեմաները: Աշակերտի, որպես անձնավորության, նկատմամբ վերաբերմունքը դժվար գործ է, որը պահանջում է հաղթահարել այնպիսի մեծ ու փոքր դժվարություններ, որոնք մշտապես առաջանում են ուսուցչի և աշակերտների հետ հաղորդակցման պրոցեսում: Երեխայի անձի նկատմամբ հարգանքի յուրահատուկ չափանիշ է նրա նկատմամբ խելացի պահանջկոտությունը: Խելացի պահանջկոտությունը միշտ արդարացնում է իրեն: Պահանջներ ներկայացնող մանկավարժը աշակերտի կողմից պետք է ընկալվի որպես մի մարդ, որը անկեղծորեն շահագրգռված է իր ճակատագրով և խորապես համոզված է իր անձի առաջադիմությամբ: Այս դեպքում պահանջկոտությունը հանդես կգա որպես անհրաժեշտություն և ոչ թե որպես անձնական շահ: «Ես և շրջակա աշխարհը» առարկայում ուսումնասիրվող թեմաները թույլ են տալիս հասկանալու, որ նպատակահարմար է պահանջկոտությունը խիստ ու կատեգորիկ ձևով օգտագործել գիտակից կրտսեր դպրոցականի նկատմամբ, իսկ մեղմ ձևով ծույլի և անպատասխանատուի հանդեպ: Պահանջկոտությունը, որքանով էլ, որ արդարացված ու ճշմարիտ լինի, օգուտ չի բերի, եթե այն իրատեսական է, աանկատարելի է, եթե այն հաշվի չի առնում աշակերտի անձի զարգացման առկա ու տրված մակարդակը: Անձնավորությունը հաջողությամբ ձևավորելու համար մանկավարժի ջանքերը պետք է նրա կողմից ընդունվեն պատասխան դրական ռեակցիաներով: Իմ կարծիքով դաստիրակությունը փոխադարձ բարի ցանկության, փոխադարձ վստահության ու հարգանքի արգասիքն է, որոնք սահմանվում են ուսուցչի և աշակերտների միջև: Տիրապետողի և ենթարկվողի հարաբերությունները, ուսուցչի կողմից երեխայի անձի դաժան ճնշումը նրան միջև ծնում են հակամարտություն, դաստիարակում իրավիճակների նկատմամբ պասսիվ, ինքնակազմակերպման, ինքնուրույն քննադատական մտածողության անընդունակ մարդու:

Մարդու մեջ դրականի վրա հենվելը

Անձին հարգելու հետ սերտորեն առնչվում է մարդու մեջ դրականի վրա հենվելու սկզբունքը։ Այդ սկզբունքի էությունը կայանում է նրանում, որպեսզի նկատել յուրաքանչյուր երեխայի մեջ ամենից ուժեղ կողմը, հասնել նրան, որ կենսունակությունը իր իրականացումն ու զարգացումը ստանա գործունեության մեջ, որպեսզի երեխայի մեջ փայլատակի մարդկային անհատականությունը։ Դպրոցական պրակտիկայում հարկ է լինում գործ ունենալ դաստիարակվախության տարբեր մակարդակի աշակերտների հետ։ Նրանց մեջ, որպես կանոն, կան այնպիսիները, ովքեր վատ են սովորում, ծուլանում է, արհամարական վերաբերմունք է ցուցաբերում կոլեկտիվի շահերի, հասարակական պարտականությունների ու հանձնարարությունների նկատմամբ։ Սակայն նկատված է որ նույնիսկ ամենից դժվար դաստիրակվող երեխաների մեջ ձգտում գոյություն ունի բարոյական կատարելագործման նկատմամբ, որը հեշտ է մարել, եթե նրան դիմել միայն կշտամբանքներով, հանդիմանություններով, հորդորներով, բայց այն կարելի է պաշտպանել և ուժեղացնել, եթե ուսուցիչը ժամանակին նկատի ու խրախուսի կրտսեր դպրոցականի ամենափոքր պոռթկումները վերացնելու համար վարքի սովորական ձևերը։ Այն կրտսեր դպրոցականները, որոնց շատ հաճախ են հիշեցնում իրենց թերությունների մասին, սկսում են իրենց նայել որպես անուղղելիների։ Ահա թե ինչու է անձի ձևավորման մեջ նպատակահարմար կողմնորոշվել այն բանում ինչ չպետք է անեն նրանք։ «Ես և շրջակա աշխարհը» առարկան հնարավորություն է տալիս ուսուցչական գործնական աշխատանքները կազմակերպելիս բացահայտել կրտսեր դպրոցականների դրական կողմերը՝ ընկերասիրության, վստահության, պատասխանատվության, պատրաստակամության, որոնց վրա հենվելով ուսուցիչը վերանայում է թույլ կողմերը։

Յուրաքանչյուր կրտսեր դպրոցական սրտի թրթիռով սպասում է այն խրախուսանքին, որին կարժանանա ուսուցչի կողմից։ Առարկայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ուսուցիչներին դուրս գալ պահանջողի կերպարից, լինել սովորեցնող և սովորող ինչն էլ բերում է աշխատանքի լուծման։ Անձի ձևավորման,

դաստիրակչական հարաբերությունների համակարգը հիմնված է վստահության, այն լավի հավատի վրա ինչ կա մարդու մեջ։ Աշակերտի մեջ հայտնաբերելով դրականը և հենվելով նրա վրա, հույս դնելով վստահության վրա, ուսուցիչը կանխագուշակում է անձի լինելիության ու վեհացման գործընթաց։ Եթե կրտսեր դպրոցականը տիրապետում է վարքի ու գործունեության նոր ձևերին ինչի ծիլերը սերմանում են «Ես և շրջակա աշխարհը» առարկան, իր վրա աշխատանքում հասնում է շոշափելի արդյունքների, նա ուրախության, ներքին բավարարվածության ապրումներ է ունենում, որն իր հերթին ամրապնդում է վստահությունն իր ուժերի նկատմամբ, հետագա աճի ձգտմանը։ Այդ դրական հուզական ապրումներն ուժեղանում են,եթե դպրոցականի հաջողությունները վարքում ու նրա զարգացման մեջ նկատում ու նշում են ուսուցիչները, ընկերները, հասակակիցների կոլեկտիվը։ Դրականի վրա հենվելու դաստիրակության սկզբունքը առավել լրիվությամբ և հետնողականորեն բացահայտվում է Ա. Ս. Մակարենկոյի բանաձևում մարդուն պետք է մոտենալ լավատեսական հիպոթեզով թող նույնիսկ սխալվելու որոշ ռիսկով։ Երեխայի անձի և վարքի ճիշտ ձևավորման վրա մեծ դրական ազդեցություն է ունենում կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը։ Երեխայի զարգացումը, տեղի ունենալով ժամանակի մեջ, ունի իր ներքին օրինաչափությունները, արտացոլման ձևերի հերթափոխման մեջ որոշակի պարբերականությունը։ Տարիքային յուրաքանչյուր շրջան կապված է ապրած տարիների քանակի, տարբեր օրգանների հասունացման աստիճանի ու նրանց ֆունկցիաների ինչպես նաև կուտակած սոցիալական ու արտադրական փորձի և յուրաքանչյուր տարիքի համար տիպական գործունեության հետ։

Յուրաքանչյուր տարիքի համար բնորոշ են իր սենսորային, ինտելեկտուալ և հուզական գործընթացների ընթացքի առանձնահատկությունները։ Սակայն զարգացման մակարդակը միայն ապրած տարիների արդյունքը չէ։ Ցանկացած տարիքում, հատկապես մանկական, զարգացման վրա որոշիչ ազդեցություն է ունենում դաստիրակչական ներգործությունների համակարգը։ Զարգացման սոցիալական իրավիճակի իմացումը հնարավորություն է տալիս օգտագործելու անձի ներքին ռեսուրսները նրա բոլոր էական ուժերի պահանջմունքների, հետաքրքրությունների, վարքի ու գործունեության մոտիվացիայի հետագա վերելքի համար։ Անհատական

դաստիրակչական աշխատանքը հաճախ տարվում է ոչ նրանց հետ, ովքեր դուրս են մնում կոլեկտիվից ու հակադրվում նրան։ Այդպիսի պրակտիկան է քննադատել Մակարենկոն. «Մենք սպասում ենք, որ աշակերտը կատարի այս կամ այն զանցանքը, որից հետո սկսում ենք դաստիրակել նրան։ Այն աշակերտը, որ զանցանք չի կատարել, մեզ չի զբաղեցնում. ուր է նա գնում ինչ բնավորություն է զարգանում թվացող կարգին արտաքինի տակ մենք չենք իմանում և իմանալ չենք էլ կարողանում»։ Այդպիսի մոտեցման դեպքում ստեղծվում է մանկավարժական պատրանք, քանի որ աշակերտը ոչինչ չի կատարում, նշանակում է, նրա հետ ոչինչ առանձնահատուկ տեղի չի ունենում։ Այդպես աշակերտի վարքի ներքին միտումները մնում են ուսուցչի ուշադրության սահմաններից դուրս։ Դաստիրակողը պետք է տեսնի բոլոր աշակերտներին, յուրաքանչյուր աշակերտ նրա անհատական յուրահատուկ ուղու զարգացմամբ։ Միայն այդ դեպքում կարելի է դաստիրակչական աշխատանքի հաջողության հույս ունենալ։

Անձի և պատասխանատու վարքագծի ձևավորումն ապահովվելու համար պետք է ճանաչել երեխային։ Չէ որ մենք գիտենք ինչի ենք ուզում հասցնել երեխային և նրան դաստիրակում համապատասխանաբար։ Օրինակ՝ ցանկանում ենք, որ նա ազնիվ լինի, բարեխղճորեն վերաբերվի իր պարտականություններին, և պահանջում ենք այսպիսի կարգ. խրախուսում ենք ճիշտ արարքների համար, պատժում շեղումների դեպքում։ Սակայն բոլորին քաջ հայտնի է, որ հաճախ երեխաների մեջ ձևավորվում են անձնավորության ամենևին ոչ այն հատկանիշները և առանձնահատկությունները ինչ սպասում էր ռաուցչուհին։ Այդպես է պատահում, որովհետև ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, յուրաքանչյուր երեխա յուրովի է վերաբերվում դաստիրակչական ներգործությանը, այսինքն միևնույն ներգործությունը տարբեր երեխաների վրա կարող է միանգամայն տարբեր տպավորություններ թողնել։ Դաստիրակչական ներգործության նկատմամբ երեխայի ռեակցիան կախված է շատ հանգամանքներից նրա պահանջմունքներից և ձգտումներից, որոնք նա ունի անհատական առանձնահատկություններից և արժանիքներից, որոնք նրա մեջ ձևավորել են մարդուց, որը կազմակերպել է այդ ներգործությունը, այն հուզական վիճակից, որը համար է երեխային և, նույնիսկ, նրա վերաբերմունքից այն գործունեության նկատմամբ, որով նա տվյալ պահին զբաղվում է։ Բերենք օրինակ։

Տարբեր երեխաներ միննույն ներգործությանը կամ իրադրությանը կարձագանքեն տարբեր կերպ կախված պահանջի այն ուժից, որը տվյալ պահին ղեկավարում է նրանց։ Դասերը պատրաստելու համար խաղը կամ ընթերցանությունը դադարեցնելու առաջարկը իր աշխատանքով տարված աշակերտը կընդունի և կկատարի այլ կերպ, իսկ այն աշակերտը, որն այդ աշխատանքի նկատմամբ անտարբեր է մի այլ կերպ։ Եթե երեխան զբաղված է ընթերցանությամբ, կառուցումով կամ մոդելավորմամբ, բայց այնքան էլ տարված չէ իր գործով, որպես կանոն, նա շատ հանգիստ է ընդունում թեթևակի հիշեցումն այն մասին, որ զբոսանքի գնալու կամ դասերը պատրաստելու ժամանակն է։ Նա հեշտությամբ թողնում է այն գործը, որով զբաղվում էր անտարբերությամբ։ Երբ երեխան շատ է տարված իր գործով մեծահասակն պետք է այլ կերպ վերաբերվի։ Առանց նախազգուշացնելու առաջարկելը անմիջապես դադարեցնելու զբաղմունքը, որով երեխան շատ է տարված, հանդիպում է ուժեղ պահանջմունքի դիմադրությանը և այդ պատճառով սովորաբար առաջացնում է մերժումն զայրույթ։

Այսպիսով, անձի և պատասխանատու վարքագծի ձևավորումը ճիշտ կազմակերպելու համար, առաջինը, որ պետք է հաշվի առնել՝ տվյալ պահին երեխայի վիճակն է, ինչպես նաև այն պահանջի ուժն ու լարվածությունը, որը նրան դրդում է զբաղվելու որոշակի գործունեությամբ։ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի ճիշտ դասավանդումը հետաքրքիր մեթոդների, խաղերի կիրառումը հնարավորություն է տալիս աշակերտների մեջ սերմանել այնպիսի անձնային որակներ ինչպիսիք են կամքը, նպատակասլացությունը, պատրաստակամությունը։ Երեխայի արժեքային համակարգը ձևավորում է դպրոց մտնելու շեմին։ Ուսուցիչը պետք է ճիշտ մեթոդներ կիրառելով զարգացնի, խթանի նրա զարգացումը։ Շատ կարևոր է, որ կրտսեր դպրոցականը կարողանա ինքնուրույն կազմակերպել իր կյանքը, իմանա իր հետաքրքրություններն ու նախասիրությունները, դրանց հասնելու մեթոդները։ Առավել դյուրին է դառնում աշակերտի ընկալումը, եթե այն մատուցվում է խաղերի հետաքրքիր պատմությունների միջոցով։ Դնել աշակերտներին այնպիսի իրավիճակների մեջ, որ աշակերտը կարողանա ելք գտնել և ճիշտ որոշում կայացնել իրավիճակից դուրս գալու համար։ Այս պարագայում օգնում է ուսուցչի հմտությունը և վարպետությունը։

«Ես և շրջակա աշխարհը» առարկայից դաս-պլանի նմուշ-օրինակ։

Դասի թեման – «Ես և ուրիշները» թեմայի ամփոփում

Դասի տիպը - համագործակցային

Դասի նպատակները– ակադեմիական–հասկանա

- մարդը բնության հասարակության մասնիկ է։
- փոխօգնությունը, համագործակցությունը և վստահության վրա հիմնված հարաբերությունները փոխշահեկան են, կարողանա բացատրել դա։
- իր առջև ծառացած դժվարությունները և փորձի ինքնուրույն հաղթահարել դրանք։

Կարողանա

- կատարել տրամաբանական եզրահանգումներ, որոշումներ կայացնել, խնդիրներ լուծել

Կարևորի

- ընկերական հարաբերությունների դերն իր կյանքում

Սոցիալական

- արժևորի իր տեղը հասարակության մեջ
- կարևորի միջանձնային հարաբերությունները
- ձևավորի սեփական որոշումներ կայացնելու և նպատակներին հասնելու կարողություններ։

Դասի ընթացքը–խթանում– աշակերտներին բաժանում եմ 4 խմբի, յուրաքանչյուրում 5 աշակերտ։ Սեղաններն ունեն իրենց անվանումները «Ընկերություն», «Պահվածք», «Աշխատանք և ժամանց», «Նպատակասլացություն»։ Սեղանին դրված է բառահումք փոխօգնություն, վստահություն, հավատարմություն, վարվելակերպ, բարեկրթություն, պատասխանատվություն, որոշում, ձգտում, կարգապահություն, համերաշխություն, հանգիստ, զբոսանք, նախասիրություն, սիրած զբաղմունք, բարձր տրամադրություն, աշխատասիրություն։ Աշակերտները ըստ այդ բառերի բովանդակության բաժանվում են խմբերի նստում իրենց համապատասխան սեղանների շուրջ։ Խմբերը ձևավորելուց հետո աշակերտները կատարում են իրենց առջև դրված առաջադրանքները։ (6-7 րոպե)

Իմաստի ընկալում– սեղաններին դրված են տարբեր բովանդակությամբ տեքստեր «Մոռացված խոստում», «Ինչու հեռացան», «Ամենալավ վկայականը», «Նուշիկի երկուշաբթին»։ Բնագրերը դրված են խառը դասավորությամբ։ Աշակերտներին տրվում է ժամանակ, որպեսզի ընթերցեն, հասկանան և պատասխանեն պահանջվող հարցերին։ (10– 13 րոպե)

- Արքայադստեր արարքը ձեզ դուր եկավ։ Ինչու։
- Արքայադուստրը օձի համար լավ ընկեր էր։ Իսկ օձը։
- Ձեր կարծիքով ինչ է ընկերությունը։
- Հորինել ավարտ «Մոռացված խոստում»։
- Ձեր նախասիրությունները ջանք պահանջում են։
- Երբևէ զղջացել եք ծուլության համար։
- Ջանասիրությունն օգնել է, որ ինչ-որ նպատակ իրագործեք։ Երբ, ինչպես։

«Իեչու հեռացան»

- Գրել Նուշիկի կատարած գործողությունների հերթականությունը։
- Ինչ ես կարծում ինչ լուծում կգտնի Նուշիկը։
- Ըստ գաղտնագրի կռահիր, թե ինչպիսի լուծում գտավ Նուշիկը։
- Գրիր օրվա ռեժիմ։ «Նուշիկի երկուշաբթին»։
- Ինչ էր պատրաստվում կատարել գիտնականը։
- Ում ընտրեց գիտնականը որպես իր օգնական։
- Ինչու գիտնականը ընտրեց հենց այդ երիտասարդին։
- Որն է մարդու ամենալավ վկայականը։ Թվարկել։ «Ամենալավ վկայականը»։

Առաջադրանքն ավարտելուց հետո քննարկում ենք յուրաքանչյուր խմբի աշխատանքը։ Խմբերի պատասխանը լսելուց հետո աշակերտները պետք է կռահեն, որ բնագրերի բովանդակությունը չի համապատասխանում սեղանների անվանումներին։ (15 րոպե)

Կշռադատում- նրանք փոխանակում են իրենց թեմաները համապատասխանեցնելով սեղանների անվանումներին։ Նոր բնագրերը ստանալով լսածի և սովորածի հիման վրա յուրաքանչյուր խումբ իր կարծիքն է հայտնում։ Տրվում է առաջադրանք գրել

յուրաքանչյուր բնագրին համապատասխան առած–ասացվածք։ Ամփոփելով սովորածը յուրաքանչյուր խումբ 1 նախադասությամբ ներկայացնում է բնագրի հիմնական միտքը։

- Անձը պետք է դասավորի իր օրը։
- Միայնակ ոչնչի չես կարող հասնել։
- Ծուլությունը մարդու թշնամին է։
- Ամենալավ վկայականը բարեկրթությունն է։

Տնային աշխատանք– աղյուսակում առանձնացնել իրավունքներն ու պարտականությունները, քանի որ ամեն լավի հիմքում ընկած է պարտականության ճիշտ պահպանումը և իրավունքի գիտակցումը։



Հ Հ

ազատագրական հանձնարարականները

- Առանց հանձնարարական դասերը:
- Զուգահեռ դասերից:
- Ուշացիր լինել դասերի ժամանակ:
- Միշտ կատարել հանձնարարությունները:
- Չխոսակցել գոյի:
- Հարգել ուսուցիչներին:
- Միշտակրել դասընկերներին:
- Դասերի թողարկը միշտ նկատել ուշադրությամբ:
- Օգնել հերկրին և փոքր նրեխաներին:
- Անվնասությունի բառերը չօգտագործել:



Հ Հ

հրահանգները

- Հարգեր տալ:
- Օգտվել գրադարանից:
- Դասամիջոցին հանգստանալ:
- Դասերից հետո հագնվել:
- Դասի բոլոր գործերը կատարել:
- Հնազանդ երեխա:
- Հետաքրքրասեր դիտել:
- Դասերին գալ:
- Հանձնարարված տնային դիտել:
- Բոլորին հետ անխնայելի վերաբերվել:
- Օգնել հմ սիրելի ընկերոջ:
- Դասով պարապելը կանոնավոր աշխատանքներ:

Եզրակացություն

Ուսումնասիրելով նյութը եկա այն եզրահանգմանը, որ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդումը կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում դրական ազդեցություն է ունենում: Այն հնարավորություն է տալիս աշակերտին ճանաչել իր շրջակա աշխարհը և ընտրություն կատարել: Աշակերտի մեջ ձևավորում է բարոյական արժեքներ: Հատկանշական է նաև իրավունքի և պարտականության իմացությունը: «Ես և շրջակա աշխարհը» առարկան ուսուցանելիս կիրառվող տարբեր մեթոդներից յուրաքանչյուրը իր տեղն ունի՝ խաղերը, դիտումները, ուսումնասիրությունները, գործնական աշխատանքները, փորձերը. աշակերտների մեջ ձևավորում են ճիշտ դաստիրակվելու, որոշումներ կայացնելու կարողություններ և հմտություններ: Ես եկա այն եզրակացության, որ <<Ես և շրջակա աշխարհը>> առարկան նպաստում է երեխաների ուշադրության, դիտողականության, ճանաչողականության, հիշողության և մտածողության զարգացմանը: <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ուսումնասիրման շնորհիվ աշակերտը ձեռք բերում.

- հետաքրքրասիրություն արտաքին աշխարհի նկատմամբ
- հանդուրժողականություն և բարյացակամություն այլ մշակույթների հանդեպ
- գիտակցում են բնական պաշարների սահմանափակ լինելը
- բնության հանդեպ պատասխանատվություն
- սեր դեպի բնությունը, նրա գեղեցկությունը և հոգատար վերաբերմունքը հայրենի բնաշխարհին
- ընկերասիրություն, փոխօգնություն և համագործակցություն
- ուրիշների աշխատանքի և հաջողությունների գնահատելու կարողություն
- ազնվություն, արդարամտություն, բարություն, պարտճանաչություն և պատասխանատվություն
- անհանդուրժողականություն կեղծիքի, անարդարության և իրավունքների ոտնահարման դեմ

Այսինքն, հայրենի երկրի բնության պահպանությունը համարվում է աշակերտների սրբազան գործը:

Օգտագործված գրականություն

Կրուտեցկի «Մանկավարժական հոգեբանության հիմունքները»

Գ.Ե.Ավագյան, Ս.Գ.Ստեփանյան <<Հայրենի բնություն>>

Ռ.Մ.Խաչատրյան <<Աշխատանքներ բնության պահպանման վերաբերյալ>>

Վ.Մ.Մուխումլինսկին դաստիրակության մասին

Ի.Մ.Մարիենկո «Դպրոցականների դաստիրակության բովանդակությունը»

Լ.Ալեքսանյան, Մ.Թորոսյան <<Ես և շրջակա աշխարհը>>

Կորոտով «Ուսումնադաստիրակչական պրոցեսի ընդհանուր մեթոդիկա»

Լ.Մ.Մլավինա «Դաստիրակելու համար պետք է ճանաչել երեխային»